

Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ՄԵՆԿԱՐԱՐՁՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 11—12 ԴԱՐԵՐՈՒՄ

Հայկական միջնադարյան դրականության մեջ մանկաբարձության վերաբերող նյութերը կամ թարգմանված են հունարենից կամ հունական բժշկականության ուժեղ ազդեցությունն են կրում: Սրանց մեջ կան որոշ տեղեկություններ կնոջ սեռական օրգանների անատոմիայի և ֆիզիոլոգիայի, ինչպես նաև սաղմի և հղիության դարգացման մասին: Սակայն չի կարելի դանել ոչ մի տեղեկություն այն ժամանակվա գործնական մանկաբարձության, այսինքն՝ այն միջոցառումների և միջամտությունների մասին, որ գործադրում էին հայ հին բժիշկները ծննդաբերության ժամանակ և մասնավորապես ծանր ծննդաբերության դեպքերում: Չգիտենք նաև, թե ում ձեռքով էին կատարվում այդ շրջանում բարդ մանկաբարձական օպերացիաները և սրն էր բժշկի դերը այդ ասպարեզում:

Այդ մասին շատ քիչ տեղեկություններ կան նաև եվրոպական վաղ միջնադարյան դրականության մեջ: Բժշկականության պատմության տվյալները ցույց են տալիս, որ վաղ միջնադարում մանկաբարձությունը եվրոպայում անկում էր ապրում: Մանկաբարձությունն այնտեղ աստիճանաբար անցնում է մանկաբարձուհիների և տատմերների ձեռքը, իսկ բժշկի դերն այդ ասպարեզում համարյա ամբողջովին վերանում էր:

Ինչ վերաբերում է արաբական բժշկականության պատմությանը, ապա պետք է ասել, որ նրա ծաղկման ամենափայլուն շրջանում անգամ, արաբ բժիշկները մանկաբարձության ուսումնասիրության ասպարեզում չկարողացան մի քայլ անգամ առաջ գնալ: Մեծագույն արաբ բժիշկներն իրենց աշխատությունները մեջ լավագույն դեպքում կրկնեցին միայն այն ամենը, ինչ որ գրել էին այդ ուղղությամբ հին հույները, այն էլ ոչ ամբողջո-

վին: Մահմեդական արևելքում կնոջ իրավադուրկ գրությունը թույլ չէր տալիս արաբ բժիշկներին օգնել կնոջը ծննդաբերության ժամանակ, ուստի և զրկում էր նրանց ուսումնասիրության հնարավորությունից:

Այլ էր գրությունը Հայաստանում: Այստեղ հունական բժշկականության հետ միասին դեռ հին դարերից մուտք էին գործել և իրենց խոր արմատները թողել նաև հին հույն բժիշկների գիտելիքները մանկաբարձության բնագավառում:

Հայաստանում կնոջ իրավական գրությունը բոլորովին այլ էր, քան մահմեդական ժողովուրդների մեջ, այդ պատճառով մանկաբարձության զարգացումը այստեղ ընթացավ բոլորովին տարբեր ուղիներով:

Հայաստանում մանկաբարձության ընթացքի համար մեծ նշանակություն է ունեցել այն գիրքը, որ գրավել էր հայկական եկեղեցին ծննդօգնության գործի հանդեսով:

Արդեն Շահապիվանի եկեղեցական ժողովորոշմամբ (447 թ.) հայկական եկեղեցին իր հսկողությանն է ենթարկում ամուսնության վերաբերող բոլոր խնդիրները (Ա. Ղլտչյան՝ «Կանոնագիրք Հայոց»): Ինչպես ցույց են տալիս միջնադարյան գրականության տվյալները, եկեղեցին իր ձեռքն է առնում նաև ծննդօգնության ամբողջ գործը: Առաջին տեղեկություններն այն մասին, որ եկեղեցու ներկայացուցիչները իրենք անձամբ զբաղվում էին մանկաբարձական գործունեությամբ, հաղորդում է մեզ 11-րդ դարի հեղինակ Գրիգոր Մագիստրոսը: Մագիստրոսի մի շարք նամակներից երևում է, որ նա լավ ծանոթ է եղել այն ժամանակվա բժշկական գիտությունը: Նամակներից մեկն ուղղված է Սևանի վանահայր Սարգիս վարդապետին: Նամակի բովանդակությունից երևում է, որ Գագիկ Բ. թագավորը հրավիրել էր Սարգիս վարդապետին իր մոտ՝ ինչ որ գիտական ուսումնասիրություն կատարելու համար:

Այդ նամակի մեջ Մագիստրոսը մանրամասն նկագրում է այն հիվանդությունը, որով տառապում էր Գագիկ թագավորը: Հիվանդության այդպիսի մանրամասն և հիմնավոր նկարագիր կարող էր միայն բժիշկը հաղորդել մի այլ բժշկի: Պարզվում է, որ թագավորը սեռական օրգանների ինչ որ հիվանդության պատճառով իբր թե կորցրել է իր արական սեռածին հատկությունները: Թագավորը նման վիճակում, — հեգնում է Մագիստրոսը, — ավելի դյուրին կյուրացնի Սարգսի վարդապետությունը:

թե Սարգսի ինչ վարդապետութեան մասին է խոսքը՝ դա էլ պարզվում է նամակի հետևյալ տողերից.

«Եւ արդ զգուշալի է ախարիցն այն տարբերութիւնս և հաւանիմ քեզ որ բժիշկիզ ես հողուոց մերձելոց ի ծնունդս Տեսանես դի եթէ՝ ոչ ուղիղ մանուկն ուղևորի ի մանկաբարձացն տխմարելոյ, այլ ուրեք մրցի զուղևորութիւննս և մեղձու... Այսինքն՝ ճայժմ զգուշութեամբ պետք է տարբերել այդ հիվանդութեանը: Ես վստահ եմ քեզ վրա, որովհետև զու ինքդ բժիշկ ես նրանց համար, որոնց ծննդաբերութեան ժամկետը մոտեցել է. զու ժամանակին կնկատես, եթե մանկան ոչ ուղիղ դրութեանը ուղղելիս՝ տխմար մանկաբարձը կշեղի ուղևորութեանը և կխեղդի (մանկան)»... (Գրիգոր Մագիստրոսի թղթերը. Կ. Կոստանյան, էջ 68, 1910 թ.): Գրիգոր Մագիստրոսի այս տողերը ցույց են տալիս, որ նրա ժամանակ Հայաստանում եղել են տղամարդ բժիշկներ, որոնք զբաղվել են մանկաբարձութեամբ: Դա հնարավոր էր միայն մի երկրում, որն ունի բարձր բժշկական, մասնավորապես բարձր մանկաբարձական կուլտուրա: Բայց պատահական երևվում էր արդյոք, որ մի տղամարդ, այն էլ վանական, 11-րդ դարում զբաղվեր մանկաբարձութեամբ: Այդ հարցի պատասխանը մենք գտնում ենք 12-րդ դարի սկզբներին գրած մի գրական հուշարձանի մեջ, որի հեղինակն է եղել Դավիթ վարդապետ Ալավկա որդին: Դավիթ վարդապետը ապրել է 11-րդ դարի վերջերին և 12-րդ դարի առաջին տասնամյակներում (Կիրակոս Գանձակեցու տվյալները համաձայն՝ նա մահացել է 1130 թվին): Ըստ երևույթին՝ նա իր ժամանակին հայտնի և հեղինակավոր վարդապետներից մեկն է եղել, որովհետև Կիրակոս Գանձակեցին նրան անվանում է «Դավիթ վարդապետ լուսավորիչ»: Մի սմն Արքայութեան անուն կրող քահանայի խնդրանք, որը, ըստ երևույթին, իր աշակերտն է եղել, Դավիթ վարդապետը գրել է քահանաների համար «Կանոնական օրինադրութեան»: Այստեղ հեղինակը մի շարք խրատներ է տալիս քահանաներին, որոնցով նրանք պետք է առաջնորդվեին իրենց առօրյա աշխատանքի մեջ: Նա առաջարկում է քահանաներին պայքարել ժողովրդի մեջ տարածված սնտապաշտութեանները, կախարդութեանները, ինչպես և հեթանոսական շրջանից ժառանգութեան մնացած հետամնաց վարք ու բարքի դեմ: Կանոնադիրքը բավականին առատ և հարուստ նյութ է տալիս այն ժամանակվա հասարակութեան նիստուկացի և կենցաղի մասին: Մի շարք կանոնները հնա-

բավորութիւնն են տալիս մտաւոր դադափար կազմելու այն
ժամանակվա Հայաստանի մանկաբարձութիւնն զբուժիչ մասին:

Հնուց ի վեր, զեռես հեթանոսական շրջանից, հայերը, ինչ-
պես և մի շարք այլ ժողովուրդներ, դիտում էին ամուսնութիւնն
իրրև մի ահա, որի հիմնական նպատակն է սերունդի շարունա-
կական աճման պահպանումը: Եկեղեցին իր հսկողութիւնն տակ
առնելով ամուսնական կյանքին վերաբերող բոլոր խնդիրները,
այդ նպատակով իր ժողովներում մի շարք կանոններ ու օրենք-
ներ էր սահմանել: Հենց այդ տեսանկյունից են սահմանված
Դավիթ վարդապետի այն կանոնները, որոնք երկու սեռերի հա-
րաբերութիւնն են վերաբերում: Դրանց մեջ կարծիք թիլի պիտ
հիմնական մի միտք է անցնում. այն ամենն, ինչ ստեղծելու սահ-
մանն է բնութիւնը ցեղի շարունակման և աճման համար՝ մարդն
իրավունք չունի խախտելու կամ խանդարելու արհեստական
միջամտութիւններով: Ըստ հեղինակի՝ սեռական ահալի միակ
նպատակը նոր կյանք ստեղծելն է: Այդ պատճառով կանոնա-
գիրքը արգելում է քահանային պսակել այնպիսի զուգեր, որոնց
տարիքը 15 տարեկանից ցածր է, կամ 60 տարեկանից բարձր,
որովհետև զբանք անընդունակ են սերունդ արտադրելու: Այս-
տեղից հասկանալի է այն խիստ բացասական վերաբերմունքը,
որը ցույց է տալիս հեղինակը դեպի այն ամենն, ինչ կարող է
խանգարել ու խափանել ընդմնավորման ու հղիութիւնն վիճակը:
Հղիութիւնը կանխելու նպատակով հակաբեղմնավորման միջոց-
ների գործադրումը կնոջ թե տղամարդու կողմից, կանոնագիրքը
սպանութիւնն համար մեղք է համարում: Այդ միջոցների գոր-
ծադրումը հեղինակն արգելում է նույնիսկ այն կանանց, որոնք
օրինական ամուսին չունեն:

Կանոններից մեկում (Մատենադարանի ձեռագիր № 487,
ԻԻ կանոն) ասված է. «Պոռնիկ կանայք դեղ առնուն չըյղանալ
այնպէս է, որք յորովայնին սպանանին...նոյնպէս որք դեղն տան»:

Եթե ամուսնացած կինն է գործածում հակաբեղմնավորման
միջոցը՝ նա իր մեղքը պետք է քովի մինչև իր մահը: Նույնպես
մեծ է համարում հեղինակը տղամարդու մեղքը, եթե նա դի-
մում է զանազան միջոցների իր մերձեցումը կնոջ հետ անպտուղ
դարձնելու համար՝ այդպիսիներին նա որակում է որպես մար-
դասպան, այրեցող կամ դավաճան: Իսկ եթե վիժումը կատար-
վում է ինքնաբերաբար, կնոջ ցանկութիւնն հակառակ, կանո-
նագիրքն առաջարկում է քահանային հսկել, որպեսզի վիժած

սաղմը թաղվի: Եթե սաղմը երկու և կես ամսականից մեծ է, քահանան պարտավոր է թաղելուց հետո նրա գերեզմանը կնքել խաչով:

Հանդես գալով հակաբեղմնավորման միջոցներ գործադրելու և արհեստական վիժում առաջացնելու դեմ, ըստ երևույթին հեղինակը հետապնդելիս է եղել նաև պրոֆիլակտիկ նպատակներ կնոջ առողջութունը պահպանելու համար: Մի այլ տեղ հեղինակը, օրինակ, արգելում է ամուլ կնոջ հղիանալու նպատակով մերձեցման ժամանակ դեղ գործադրել, համարելով դա անբնական և վտանգավոր միջոց: Իսկ եթե,—ասում է նա,—կինը կամ ամուսինն ի ծնե և կամ հիվանդության պատճառով ամուլ են, նրանք չպետք է դիմեն կախարհներին, այլ պետք է բուժվեն բժիշկների մոտ (կանոն 61ը): Թե այս կանոնից և թե Գրիգոր Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետին ուղղած թղթից պարզ երբևիցե վաղ շրջանում) Հայաստանում կային բժիշկներ, որոնք հատկապես զբաղվում էին կնոջ ու տղամարդու սեռական օրգանների հիվանդությունների բուժմամբ, բայց թե ի՞նչ միջոցներով ու ձևերով, այդ, դժբախտաբար, մեզ հայտնի չէ: Հեղինակներն այդ մասին ոչինչ չեն ասում:

Դավիթ վարդապետի կանոնագիրքը որոշ չափով լույս է սփռում նաև այն ժամանակվա հայ կնոջ իրավական դրություն վրա: Այդ տեսակետից շատ բնորոշ է հետևյալ կանոնը. «Եթե հայ կինը կենակցել է արարի հետ, ապա վերադարձել է յուր համատին և ուղում է ամուսնանալ, մի արգելք նրան. նրա անցյալը պետք է պոռնիկութուն համարել»:

Այսպիսով, եթե կինը կենակցում է մեկ ուրիշի հետ, նպատակ չունենալով երեխա ունենալ՝ պոռնիկութուն է համարվում: Եվ ընդհանրապես՝ եթե կինը հղիանում է, նա դրանով քաղում է իր անցյալի բոլոր մեղքերը: Այդ մասին պարզ և որոշակի վկայում է մի այլ կանոնագիրք (Մատենադարանի ձեռագիր № 652), որի մեջ ասվում է՝ «Եթե կինը որևէ մեղքի համար պատժվել է, ապա այդ պատիժը վերացվում է, եթե նա ծննդաբերել է, կամ հետծննդյան շրջանումն է դառնվում, և մանավանդ, եթե ծննդաբերությունը ծանր է եղել»: Սա մի ապացույց է այն հուսմանիստական մոտեցման, որ ունեցել է հայ հասարակութունը՝ զեպի հղի կինը ու երեխան, և, թվում է մեզ, որ դա է հայ տրա-

դիցիոն ընտանիքի բազմազավակույթյան հիմնական պատճառներէց մեկը:

Այդպիսի մոտեցման մասին է վկայում նաև Դավիթ վարդապետի տեսակետը կնոջ դաշտանի մասին: Հավանաբար, պատասխանելով Արքայութեան քահանայի հարցին, նա հերքում է այն կարծիքը, թե կնոջ դաշտանը պիղծ երևույթ է: Նա գտնում է, որ դա կնոջ համար օգտակար մի բնական երևույթ է և աշխատում է բացատրել կնոջ դաշտանի ծագման ու ընթացքի պատճառները՝ հենվելով իր ժամանակի բժշկական գիտութեան տվյալներէ վրա: Պետք է շեշտել, որ հայ միջնադարյան հեղինակներից Դավիթ վարդապետն առաջինն ու, թերևս, միակն է, որ այդքան մանրամասն ծանոթացնում է մեզ դարաշրջանի գիտութեան մեջ ընդունված կնոջ դաշտանի ֆիզիոլոգիայի տեսութեան հետ: Հետևելով Հիպոկրատյան դպրոցի ուսմունքին՝ նա նույնպես գտնում է, որ կնոջ ձվարանները, ինչպես և տղամարդու ձվիկները, արտադրում են սերմ: Դավիթ վարդապետի կարծիքով ուղեղից սկիզբ են առնում երկու զույգ երակներ: Այս երակներից մի զույգը զուրս գալով ուղեղից՝ իջնում-մտնում է երկիւմների մեջ: Այստեղ արյունը մաքրվում է և նույն երակների միջոցով անցնում է ձվարանների մեջ, որտեղ պարզված ու մաքրված արյունը եփվում, սերմ է դառնում: Մյուս զույգ երակը, որ ուղեղից դաշտանի արյունն է բերում, մտնում է կնոջ ստինքների մեջ, որտեղ նա եփվում է ու կաթ է դառնում, երբ կինը հղիանում է, կամ կրծքով կերակրում նորածին երեխային: Սերմն և ապարան (այսինքն՝ դաշտանը—Գ. Հ.) սկզբունք են մարմնոյն, մինն ի գոյացութիւն միւսն ի հաճումնս,— գրում է հեղինակը: Եթե կինը հղի է, դաշտանի արյունը ավելորդ լինելով, զուրս է երնում կնոջ մարմնից: Ինչպես երևում է, Դավիթ վարդապետը լավ ծանոթ է էղել իր դարաշրջանի բժշկական գիտութեանը, որովհետև նա քննադատորեն է մոտենում իր առաջ դրած բժշկական խնդիրներին և իր սեփական կարծիքն է հայտնում պողի հետարդանդային սնման մասին: Նա կասկածի տակ է առնում միջին դարերում բժիշկների մեջ տարածված այն կարծիքը, որ իբր թե սաղմն արգանդի մեջ սնվում է կաթով, որը ստանում է մոր ստինքներից պորտալարի միջոցով, և ենթադրում է, որ նա սնվում է արյունով: Մանրամասն շարադրելով իր տեսութեանը դաշտանի մասին, նա առաջարկում է քահանաներին արգելել ամուսինների մերձեցումը դաշտանի ընթացքում, որովհետև նման

դուզավորումից ծնված մանուկները արատավոր են լինում: Ի ծնե համբուսթյունը, կուրությունը, խլությունը և մի շարք այլ անբուժելի հիվանդություններ, որ ունենում են նորածին մանուկները, նա վերագրում է այդպիսի մերձեցման: Իսկ եթե ամուսինները՝ իմանալով այդ ամենը, մերձենան, ապա այդպիսիները «մանկանց սպանողք են»,—ասում է հեղինակը:

Կանոնագրքի հեղինակը արգելում է մերձեցում ունենալ նաև հղիության ընթացքում և առաջարկում է քահանային չպսակել կնոջը, եթե նա հղի է: Այդպիսի ղեկավարում պսակը թույլ է տրվում միայն կնոջ ծննդաբերությունից հետո: Կասկած չկա, որ միայն սրանով չէին սահմանափակվում կնոջ հղիության և անձնական հիգիենային վերաբերող ժամանակաշրջանի միջոցառումները: Դավլեթն իր կանոնների մեջ շեշտը դնում է միայն այն միջոցառումների վրա, որոնց խախտումը, իր կարծիքով, կարող էր անդրադառնալ սաղմի զարգացման և կանոնավոր աճման վրա:

Ուշադրության արժանի է առանձնապես այն կանոնը, որի մեջ տեղեկություններ կան մանկաբարձակոն օպերացիաների, այն է՝ պողաշրջման և պողահատման մասին: 12-րդ դարում թե Արևելքում և թե Եվրոպայում մանկաբարձական գիտության մեջ ներկայումս ընդունված իննյոդ օպերացիաներից ոչ մեկը չէր կատարվում: Ծանր ծննդաբերությունների ժամանակ մոր կյանքը փրկող միակ օպերացիան պողահատումն էր հանդիսանում, որը կատարվում էր պողի թե կենդանի և թե մեռած լինելու դեպքերում: Պողաշրջումը, որը կատարում էին Եգիպտոսի, Հնդկաստանի և Հունաստանի բժիշկները, միջին դարերի սկզբին, երբ հին հունա-հույնական բժշկականությունն իր վերջնական անկման շրջանն էր ապրում,—արդեն մոռացության էր մատնվում: Եվ ահա Դավլեթ վարդապետն իր կանոնագրքի մեջ (Կ. կոստանյանի օգտագործած ձևադրում ԴԳ կանոնը, իսկ Մատենադարանի № 487 ձևագրի մեջ ՃՁ կանոնը), մոր կյանքը փրկելու համար առաջարկում է քահանային հսկել, որպեսզի այդ օպերացիան կատարվի մասնադետի ձևերով:

Այդ կանոնի մեջ ասված է.

«Մանուկ կրկնեալ ի ներքս, պատրաստաբար ձեռն արկանել, պարտ է մանկաբարձին կամ այլ արուեստաւորին ուղղել զմանուկն զի մի մեռանիցի մայրն»:

«Եթէ մեռեալ լինի մանուկն ի ներքս, դժուարածին լինի»:

յաղաքս այնորիկ մայրն մինչև ի մահ հասնալ՝ պարտ է ար-
ուեստաւորաց գործոյն, յարանց եթէ ի կանանց, որ վստահա-
նայն կարեն. ձեռն արկանել ի ներքս, յոշել մեռեալ մանուկն,
և արտաքս բերել, զի մի մայրն մեռանիցի»:

«Ապա եթէ կենդանի իցէ մանուկն, մի ոք հանդգնեսցի
սպանանել յաղաքս կենաց մօրն, թող մայրն մեռանիցի և մի
մանուկն»:¹

Այս կանոնի վերլուծությամբ կարելի է մի շարք շատ կա-
րեւոր եզրակացություններ անել: Նախ՝ հեղինակն առաջարկում
է քահանաներին հսկել, որ ծանր ծննդաբերությունների համա-
պատասխան դեպքերում կատարվեն գիտական մանկաբարձու-
թյան մեջ ընդունված հիմնական օպերացիաներից երկուսը՝ պտղա-
շրջումը և պտղահատումը: Պտղահատման օպերացիան կատարվել
է հին դարերից ի վեր բոլոր ժողովուրդների բժիշկների կողմից:
Պտղաշրջումն, ինչպես վերը հիշեցիք, միջին դարերի սկզբում
մոռացության էր մատնված և այլևս չէր կատարվում մինչև
13-րդ դարի վերջերը: 13-րդ դարի երկրորդ կեսին այդ մասին
իր աշխատություններից մեկի մեջ մի ակնարկ է անում Ալբերտ
Մեծը (Albertus Magnus) և միայն 1550 թվին այդ օպերացիան
կատարում է հայտնի ֆրանսիացի վիրաբույժ Ամբրուազ Պարեն
(Ambroise Paré):²

Ահա սրանից հետո է միայն, որ պտղաշրջումը սկսում են
գործադրել մանկաբարձության մեջ իբրև մոր և մանկան կյանքը
խնայող հիմնական օպերացիաներից մեկը:

Պտղաշրջման օպերացիայի կատարմամբ գիտական մանկա-
բարձության պատմության մեջ մի նոր դարաշրջան է սկսվում:
Նվիրակալուս վերջանում է մանկաբարձության համար այն մութ
և անմխիթար շրջանը, որը տևում է ավելի քան հազար տարի:
Երբ մանկան կյանքը ծանր ծննդաբերությունների դեպքերում
հաշվի չէր առնվում:

Դրանից հետո՝ ծննդաբերության ծանր դեպքերում՝ մոր
կամ մանկան կյանքը փրկելու համար՝ բժիշկներն սկսում են
մշակել դանազան ցուցմունքներ և հակացուցմունքներ այս կամ
այն օպերացիան կատարելու համար:

¹ Կոստանյանց—Դավիթ վարդապետ Ալավկա որդի, «Աղագրական
հանդես» 2, էջ 126:

² Н. Н. Феноменов, Оперативное акушерство, 1907, էջ 135 և Б. М. Э.,
հ. I, էջ 303:

Դավիթ վարդապետի առաջարկը, որի համեմատ էլ անհրա-
ժեշտ է պաղի միջաձիգ դեպքերում կատարել պտղաշրջումը,
ցույց է տալիս, որ հեղինակի ապրած դարաշրջանում այդ օպե-
րացիան ընդհանրապես կատարվելիս է եղել Հայաստանում և
վաղուց արդեն քաղաքացիութան իրավունք վայելել:

Որ մանկաբարձութունը Հայաստանում բարձր հիմքերի
վրա է դրված եղել, համոզում է մեզ դարձյալ այդ կանոնի բո-
վանդակութան վերլուծութունը:

Մանկան միջաձիգ դրութունը բնորոշելու համար հեղինա-
կը գործ է ածում «մանուկ կրկենալ», այսինքն՝ «մանուկը կըր-
կընված = ծալված դրութան մեջ» տերմինը: Միջաձիգ դրութան
այդպիսի բնորոշումը ցույց է տալիս, որ այդ ժամանակի բժիշկները
շատ որոշ էին պատկերացնում մանկան անդամադասավորու-
թյունը մոր արգանդի մեջ: Դա հնարավոր կլիներ միայն այն
դեպքում, եթե հղի կնոջը զննող բժիշկը լավ տիրապետեր ման-
կաբարձական զննման ներքին և արտաքին ձևերին: Կանոնի այն
տողերը, թե «Մանկաբարձը կամ այլ արհեստավոր» (այսինքն՝
մասնագետը—Գ. Հ.) պետք է արագ ձեռքը ներս տանի արգան-
դի մեջ և ուղղի մանկան դրութունը՝ ցույց է տալիս, որ հե-
ղինակը, ինչպես նաև նրան ժամանակակից բժիշկները, պարզ
ու որոշ պատկերացնում էին, թե ինչպիսի հետևանքներ կարող
էր ունենալ առաջարկած միջամտութունը, քանի որ պտղա-
շրջումը այն ժամանակները, ըստ երևույթին, կատարվել է առանց
նարկոզի: Այդպիսի օպերացիա, այն էլ առանց հիվանդին քնաց-
նելու, կարող էր կատարել մեկը, որ քաջ ծանոթ է ծննդաբերա-
կան ակտին և նրա շրջանների ընթացքին: Պտղաշրջման միակ
նպատակը մոր կյանքը փրկելը չէր: Մանկան կյանքը փրկելու
խնդրին նա ավելի մեծ նշանակութուն է տալիս, քան մոր կյան-
քին:

Եթե մանուկը կենդանի չէ, ապա պետք է կտրատել ու հա-
նել մոր արգանդից, որպեսզի մայրը չմեռնի,—գրում է հեղինա-
կը,—ասկայն, եթե մանուկը կենդանի է, ոչ ոք չպիտի համար-
ձակվի սպանել մանկան՝ մոր կյանքը փրկելու համար: Թող
մայրը մեռնի և ոչ թե մանուկը: Դեպի մայրն ունեցած հեղի-
նակի այս մտեցումը այժմ շատ տարօրինակ է թվում մեզ, իսկ
արդի մանկաբարձական գիտության տեսակետից՝ միանշանակ
սխալ և անհիմն, սակայն դա որոշ չափով հասկանալի կլինի, եթե
հիշենք, որ Դավիթը հղիութունը կանխելու համար միջոցներ

գործադրելն անգամ սպանութեան հավասար մեղք է համարում։ Մոր արդանդի մեջ չմկրտված մանկանն սպանելը մեղք էր համարվում, քանի որ ապանվում էր հողին, որը, եկեղեցու հասկացողութեամբ, աստվածային ծագում ունի։ Մեղ համար այնքան էլ պարզ չէ, թե հեղինակը ինչ ձևով է ենթադրում պահպանել մանկան կյանքը, երբ ծանր ծննդաբերութեան զեպքում մոր մահն անխուսափելի է դառնում։ Այժմյան մանկաբարձն այդպիսի դեպքում մահացող մոր վրա կկատարեր կեսարյան հատում և կազատեր մանկան կյանքը։

Արդյոք հեղինակը նկատի ունի՞ այդ օպերացիան, թե ոչ, — դժվարանում ենք ասել։ Հին հռոմեական օրենքը (lex regio de inferendo mortuo) պահանջում էր բժշկից մանկան կյանքը փրկելու նպատակով՝ մոր մահվան հենց առաջին պահին կատարել կեսարյան հատում։

Քրիստոնեական դարաշրջանում շատ երկրներում այդ օպերացիան կրոնական աստառ ստացավ։ Օրինակ՝ հին բելգիական օրենքը պահանջում էր քահանայից, որ նա հղի կնոջ հանկարծակի մահվան դեպքում՝ ինքը կատարի կեսարյան հատումը, եթե այդ պահին մահացող կնոջ մոտ բժիշկ չկա։ Հավանական է, որ Դավիթ վարդապետը հենց այդ միջամտությունը նկատի ունի, երբ պահանջում է փրկել մանկան կյանքը՝ զոհելով մոր կյանքը։ Հայ միջնադարյան բժշկական գրականության մեջ կեսարյան հատման մասին մի ակնարկ է անում (այն էլ ոչ պարզ) Կիլիկյան շրջանի բժիշկներից մեկը իր «Բանք կանանոց պատճառացն, որ չըլինի յըղանուսն» աշխատության մեջ, հեղինակը թվելով կնոջ ամուսնի պատճառները, նրանցից մեկը համարում է այն, որ «կինն անծինութեանն եղանակն կու ծնանի»։ Դժվար է պատկերացնել, բացի կեսարյան հատումից, մի այլ եղանակ, երբ կինը կարող է ծնանիլ անծինութեան եղանակով, ուստի պետք է եղրակացնել, որ հայ բժիշկները միջին դարերում ծանոթ էին այդ գործողության հետ։ Բայց թե ինքը Դավիթը ծանոթ էր այդ օպերացիային, թե ոչ, հաստատապես ասել դժվար է։

Կանոնի այն տողերը, որտեղ հեղինակն ասում է, որ «Պարտ է արուեստաւորաց գործոյն՝ յարանց եթէ ի կանանց», ինչպես և Գրիգոր Մազիստրոսի նամակը Սարգիս վարդապետին, ցույց է տալիս, որ Հայաստանում, 11 և 12-րդ դարերում, մանկաբարձութեամբ զբաղվում էին ոչ միայն կին, այլև տղամարդ բժիշկ-

ներբը: Դա հնարավոր էր միայն մի քաղաքակրթված երկրում, որն ունի բարձր բժշկական և մասնավորապես բարձր մանկաբարձական կուլտուրա:

Մեր կարծիքով՝ պտղաշրջումը կատարվել է Հայաստանում ոչ միայն 11 և 12-րդ դարերում, այլ ավելի վաղ: Ըստ երևույթին՝ նա հայտնի է եղել հայ բժիշկներին ղեռնա հին դարերում և հարատևել է Հայաստանում շնորհիվ այն հանգամանքի, որ հին հունական բժշկականութան տրադիցիաներն այստեղ պահպանվել են ավելի լավ, քան որևէ ուրիշ տեղ:

Համեմատելով Դավիթ վարդապետի հիշյալ կանոնը Հիպոկրատի «Կանանց հիվանդությունների մասին» աշխատության համապատասխան հատվածներին հետ, տեսնում ենք, որ Դավիթի կանոնը Հիպոկրատի աշխատության 69 և 70-րդ գլուխների համառոտած շարադրությունն է՝ Հիպոկրատը պտղի միջաձիգ դրությունը բնորոշելու համար նույնպես գործ է ածում «ծալված մանուկ» տերմինը և «մանկան դրությունը ուղղելու համար», նույնպես առաջարկում է ձեռքը «արագ» ներս տանել արգանդը և շրջել մանկանը: Պտղահատման համար նա տալիս է նույն ցուցմունքները, ինչ որ մենք գտնում ենք Դավիթի կանոնի մեջ: Ինչ վերաբերում է կանոնի երրորդ կետին, որն առաջարկում է ծանր ծննդաբերությունների դեպքերում զոհել մորը մանկան կյանքը փրկելու համար, ինչպես քիչ առաջ ասացինք, զուտ կրոնական աստու ունի և ոչ մի կապ չունի Հիպոկրատի ուսմունքի վրա:

Դավիթ վարդապետի կանոնների մեջ եղած նյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս մեզ հետևյալ եզրակացություններն անել.

Միջին դարերում մանկաբարձությունը Հայաստանում զարգացել է ինքնուրույն ուղիներով, անկախ արաբական բժշկականությունից և 11-րդ և 12-րդ դարերում հասել է իր զարգացման բարձր աստիճանին: Հունական կլասիկ բժշկականության տրադիցիաները մանկաբարձության դժով Հայաստանում պահպանվել են ավելի երկար, քան որևէ այլ տեղ, և դա է պատճառը, որ մանկաբարձության հիմնական օպերացիայից մեկը՝ պտղաշրջումն այստեղ գործադրվել է մինչև միջին դարերի երկրորդ կեսը:

1 Гиппократ, Избран. книги — „О женских болезнях“, 1936 г., гл. гл. 69, 70, стр. 675.

МАТЕРИАЛЫ О СОСТОЯНИИ АКУШЕРСТВА В АРМЕНИИ В XI и XII в. в.

В работе приведены указания некоторых средневековых авторов, которые освещают любопытными штрихами состояние вопроса об акушерстве в Армении в XI—XII в. в. Так выясняется, что в этот период родовспомогательное дело в Армении находилось в ведении церкви. Это можно усмотреть из одного письма Григория Магистра, в котором говорится об акушерах, производивших какие-то акушерские операции. Настоятель Севанского монастыря ученый монах Саркис, которому адресовано было это письмо, и сам занимался акушерством.

В дошедшей до нас рукописной работе ученого Давида, сына Алавка, называемой «Канония», сказанное также находит свое полное подтверждение.

В «Канонах» этих имеется, между прочим указание о том, что армянские врачи в XI—XII веках при поперечном положении плода производили операцию внутреннего акушерского поворота. В работе указывается, что операция эта производилась в Армении в течение средних веков.